# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2020/79**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5262-2020 գրությամբ «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1154-2020 գրության հիման վրա, 09.04.2020թ. թիվ 26/26-1/5262-2020 գրությամբ նախաձեռնել «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/79 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:40-ին և 22.04.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## 3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1154-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-8/2 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից: Ընկերությունը գրությամբ դիմել է գնահատող հանձնաժողովին՝ իր կողմից ներկայացված հայտը չեղյալ համարելու վերաբերյալ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ 30.03.2020թ. գնահատող հանձնաժողովը մերժել է «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի հայտը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/79 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:40-ին և 22.04.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## 4. ՍՑ-ՆԳ-2020/79 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/79 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-8/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն 26.03.2020թ. գրությամբ դիմել է գնահատող հանձնաժողովին՝ իր կողմից ներկայացված հայտը չեղյալ համարելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սկսվել է գործընթաց Ընկերությանը մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով: Ընթացակարգի քարտուղարի կողմից կապ է հաստատվել «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի հետ և պարզաբանվել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ներառված չի եղել վերոնշյալ ցուցակում, ուստի Ընկերությունը կարող է շարունակել գնման գարծընթացն և կնքել պայմանագիր: Սակայն 27.03.2020թ. պատասխան գրությամբ Ընկերությունը կրկին չի ցանկացել շարունակել գործընթացը:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված գրությունը՝ Ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, 30.03.2020թ. գնահատող հանձնաժողովը մերժել է «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի հայտը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5262-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1154-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

***<u>գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-8/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն 26.03.2020թ. գրությամբ դիմել

է գնահատող հանձնաժողովին՝ իր կողմից ներկայացված հայտը չեղյալ համարելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սկսվել է գործընթաց Ընկերությանը մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով: Ընթացակարգի քարտուղարի կողմից կապ է հաստատվել «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի հետ և պարզաբանվել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ներառված չի եղել վերոնշյալ ցուցակում, ուստի Ընկերությունը կարող է շարունակել գնման գարծընթացը և կնքել պայմանագիր: Սակայն 27.03.2020թ. պատասխան գրությամբ Ընկերությունը կրկին չի ցանկացել շարունակել գործընթացը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված գրությունը՝ Ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ, 30.03.2020թ. գնահատող հանձնաժողովը մերժել է «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ, արձանագրում եմ, որ «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացվելուց հետո՝ 26.03.2020թ. և 27.03.2020թ. Պատվիրատուին ուղղված գրություններով, հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5262-2020 գրությամբ «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ֆորտիս Ֆաբեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**